ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.03.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/26

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Արջիջի» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի (պետական ռեգիստրի գրանցման համար),

քննելով «Հրազդան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար դեղորայքի, բնա, լաբորատոր ախտորոշիչ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0104» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից 17.03.2022թ. ներկայացված (17.03.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/26 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Արջիջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Արջիջի» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 17.03.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22 /0104 ծածկագրով գնանշման հարցում:

Հրավերով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում տեղ են գտել բազմաթիվ խախտումներ, որոնց վերաբերյալ պարզաբանում է պահանջվել պատվիրատուից:

Հարգելի գնահատող հանձնաժողով Խնդրում ենք տալ պարզաբանում ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22 /0104 ծածկագրով գնանշման հարցման հրավերի հետևյալ կետերի վերաբերյալ և կատարել փոփոխություններ հրավերում Հրավերով սահմանված հետևյալ դեղերի չունեն գրանցում ՀՀ-ում և ներառված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում /ռեեստր/: Չափաբաժին 7 Չափաբաժին 8 Չափաբաժին 9 Չափաբաժին 43

Խնդրում ենք տալ պարզաբանում, ընդունելու եք արդյոք չգրանցված դեղեր? Հակառակ դեպքում խնդրում ենք փոխարինել, կամ հեռացնել հրավերի ցանկից: Խնդրում ենք շտկել 40-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը և կատարել փոփոխություն գնանշման հարցման հրավերում:

Ի պատասխան ներկայացված պարզաբանման պահանջին պատվիրատուն տվել է հետևյալ պարզաբանումը՝

Հարգելի գործընկեր Ձեր կողմից կատարված պարզաբանման հարցման կապակցությամբ հայտնում ենք, որ ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0104 ծածկագրով գնանաշման հարցմամբ մրցույթին այս պահի դրությամբ ARMEPS համակարգով հայտ է ներկայացրել 3 մասնակից: Միաժամանակ հայտնում ենք, որ ընկերության կողմից հայտարարված հրավերը համապատասխանում է օրենքով սահմանված կարգերին, մասնավորապես, պայմանագրին կից հավելված 1-ով «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով» հստակ սահմանված են օրենքների կարգավորումները՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետ՝ Տեխնիկական բնութագրերում առևտրային նշանին, ֆիրմային անվանման, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը: ՀՀ կառավարության 02.05.2013թ. 502-Ն որոշում Պիտանելիության ժամկետները և տեխնիկական բնութագրերեը համաձայն ՀՀ Կառավարության 02.05. 2013 թ. Թիվ 502.-Ն Ա. 2.5 տարի և ավելի պիտանելության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանելության ժամկետ Բ. նյութերի տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ ԱՆ նախարարի 2010թ. 17-Ն հրաման ինչպես նաև ՀՀ

կառավարության 04.05.2017թ. 526--Ն որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետի համաձայն հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը.

Փաստացի պատվիրատուն հրաժարվել է տալ հստակ պարզաբանում և չի կատարել փոփոխություն հրավերով պահանջված չափաբաժինների տեխնիկական բնութագրերում պատճառաբանելով, որ ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0104 ծածկագրով գնանաշման հարցմամբ մրցույթին այս պահի դրությամբ ARMEPS համակարգով հայտ է ներկայացրել 3 մասնակից:

Այսպիսով, փաստում ենք, որ ստորև նշված չափաբաժիններից և ոչ մեկը ներառված չէ ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)՝

Չափաբաժին 7 Կարսիլ 35մգ հաբ

Չափաբաժին 8 Հակագյուռզին լ-թ ներարկման սրվակ

Չափաբաժին 9 Հակաբոտուլինային շիճուկ A, B, E սրվ

Չափաբաժին 17 Բեռոդուալ 20գ 1մլ լ-թ պարուն. Է ֆենոտերոլ հիդրոբրոմիդ 0.5մգ+իպրատրոպին բրոմիդ 0.261մգ

Չափաբաժին 43 Տրոպիկամիդ 1% 5մլ ակնակաթիլ

Չափաբաժին 49 Լակտուլոզ 3.1-3.7գ 100մլ լ-թ ն/ընդ

Չափաբաժին 47 Ֆլեմոքսին 250մգ լուծվող դ/հատ

Չափաբաժին 61 Ալբենդազոլ 40 մգ/մլ դ/ կախույթ ներքին ընդունման 10 մլ

Չափաբաժին 62 Կետամին 0.5մգ դեղափոշի ներ. լ-թ-ի

Չափաբաժին 67 Ֆլեմոքսին 500մգ լուծվող դ/հատ

Չափաբաժին 70 Վալպրոյաթթվի Na-ական աղ 300մգ

Ստորև ներկայացված չափաբաժինների տեխնիկական բնութագրերը սխալ են կազմված

Չափաբաժին 40 Միզոպրոստոլ 200մգ դ/հատ (նման դեղաչափով դեղ չկա)

Չափաբաժին 69 Դիկլոֆենակ 50մգ (հստակեցված չէ ինչ, դեղահատ, մոմիկ թե ինչ)

Բացի այդ թիվ 23 չափաբաժնի համար սահմանել է այնպիսի տեխնիկական բնութագիր (ծավալը 25մլ), որը սահմանափակում է մասնակիցների քանակը և ներկայացվող առաջարկները, քանի որ ՀՀ դեղերի գրանցամատյանում առկա է նաև 30 մլ ծավալով տեղական արտադրողի դեղ, որը արհեստականորեն դուրս է մղվել:

Չհաշված, որ գրեթե բոլոր չափաբաժինները ներկայացված են առևտրային անուններով:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

ՀՀ գնումների մասին օրենքի նպատակներից մեկը համարվում է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Նաև Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Համաձայն նույն հոդվածի 2-րդ կետի

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

Համաձայն ՀՀ կառավարության 2 մայիսի 2013 թվականի 502-Ն որոշման 3-րդ կետի

3. Դեղերի գնման ընթացակարգերի հրավերներում գնման առարկա հանդիսացող դեղերի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղերին ներկայացվող հետևյալ պահանջները՝

1) դեղի անվանումը նշելիս՝ գրվում են դեղի միջազգային համընդհանուր (գեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները, դեղաձևը, դեղաչափը: Եթե Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա են նույն բաղադրատարրերով դեղի այլ գրանցված տարբերակներ, ապա դեղի գնման տեխնիկական բնութագիրը կազմվում է այնպես, որ բացառվի որևէ գրանցված տարբերակի՝ մրցույթին չմասնակցելու հավանականությունը, և հնարավոր մասնակիցների համար ապահովվեն մրցակցության հավասար պայմաններ (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր).

3. Բողոք ներկայացրած անձի պահանջ

Խնդրում ենք Ձեզ պարտավորեցնել պատվիրատուին կատարել շտկումներ ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0104 ծածկագրով գնանշման հարցման հրավերում՝ չափաբաժինների

տեխնիկական բնութագրերում և հետևաբար նաև կատարել փոփոխություն հայտերի ներկայացման վերջնաժամկետում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.03.2022թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենն ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 21.03.2022թ. ուղղված թիվ ՀԲԿ-Ե-162 գրությամբ հայտնել է, որ «Հրազդան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 2022թ. մարտի 10-ին «Դեղորայքի, ԲՆԱ-ի, լաբարատոր ախտորոշիչ նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0104 ծածկագրով մրցույթ: Մրցույթի վերաբերյալ 12.03.2022թ. ժամը 00:02 պարզաբանում է պահանջել «Արջիջի» ՍՊԸ-ն, որին տրվել է պատասխան: Հարցման պատասխանից հետո վերջինիս կողմից ստացվել է բողոք: Մրցույթի հայտերի վերջնաժամկետն է եղել 17 մարտի 2022թ. ժամը 12:20: Բողոքը ստացվել է մրցույթի հայտերի բացումից հետո՝ ժամը 17:05-ին: Մրցույթին հայտ է ներկայացրել 23 մասնակից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.03.2022թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար դեղորայքի, բնա, լաբորատոր ախտորոշիչ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0104» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Հրազդան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի, բնա, լաբորատոր ախտորոշիչ նյութերի ձեռքբերումը, որոնք խմբավորված են «101» չափաբաժիններում:

3. «Արջիջի» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է այն փաստը, որ Ընթացակարգի 7-9-րդ, 43-րդ, 47-րդ, 49-րդ, 61-62-րդ, 67-րդ և 70-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները ներառված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր), 40-րդ և 69-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը սխալ են կազմված, իսկ 23-րդ չափաբաժնի համար սահմանվել է այնպիսի տեխնիկական բնութագիր (ծավալը 25մլ), որը սահմանափակում է մասնակիցների քանակը և ներկայացվող առաջարկները, քանի որ ՀՀ դեղերի գրանցամատյանում առկա է նաև 30 մլ ծավալով տեղական արտադրողի դեղ, որը արհեստականորեն դուրս է մղվել, ինչպես նաև գրեթե բոլոր չափաբաժինները ներկայացված են առևտրային անուններով, արդյունքում Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին կատարել շտկումներ «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0104» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեխնիկական բնութագրերում:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Արջիջի» ՍՊԸ-ի 17.03.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Այսպես, «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար

դեղորայքի, բնա, լաբորատոր ախտորոշիչ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0104» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Հրազդան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի, բնա, լաբորատոր ախտորոշիչ նյութերի ձեռքբերումը, որոնք խմբավորված են «101» չափաբաժիններում:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Արջիջի» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերի կազմման իրավաչափություն, մասնավորապես հայտնելով, որ Ընթացակարգի 7-9-րդ, 43-րդ, 47-րդ, 49-րդ, 61-62-րդ, 67-րդ և 70-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները ներառված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր), 40-րդ և 69-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը սխալ են կազմված, իսկ 23-րդ չափաբաժնի համար սահմանվել է այնպիսի տեխնիկական բնութագիր (ծավալը 25մլ), որը սահմանափակում է մասնակիցների քանակը և ներկայացվող առաջարկները, քանի որ ՀՀ դեղերի գրանցամատյանում առկա է նաև 30 մլ ծավալով տեղական արտադրողի դեղ, որը արհեստականորեն դուրս է մղվել:

Ընդ որում՝ հարկ եմ համարում ընդգծել, որ բողոքաբերը վիճարկում է նաև այն փաստը, որ **<u>գրեթե բոլոր չափաբաժինները ներկայացված են առևտրային անուններով:</u>**

Արդյունքում՝ Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին կատարել շտկումներ «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0104» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեխնիկական բնութագրերում, որը խմբավորված է 101 չափաբաժիններում, մինչդեռ՝ քննության առարկա դարձնելով Ընկերության բողոքը, արձանագրում եմ, որ բողոքն ընդհանրական և վերացական է ձևակերպված, որպիսի պայմաններում հնարավոր չէ եզրակացնել թե բողոքով վիճարկվող փաստերը Ընթացակարգի հրավերով սահմանված «101» չափաբաժիններից որ չափաբաժիններին են վերաբերելի:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունն իրականացնում է բողոքով ներկայացված ապացույցների հիման վրա, ընդ որում՝ բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն է կրում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ ներկայացնելու պարտականությունը: Ընդ որում՝ օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու միայն բողոքի հետ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու և/կամ փոփոխելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Մինչդեռ՝ արձանագրում եմ, որ «Արջիջի» ՍՊԸ-ն օգտվելով իրեն՝ Օրենքի 46-րդ հոդվածի դրույթներով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք, սակայն, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց ի հավաստումն բողոքով նշված փաստերի:

Ընդ որում՝ այդպիսի հնարավորություն Ընկերությունն ունեցել է, թե բողոքը ներկայացնելու և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև գործի ելքով որոշում կայացնելը, որպիսի պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ գնահատել բողոքով ներկայացված փաստերի իրավաչափությունը:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ, գտնում եմ, որ «Արջիջ» ՍՊԸ-ի կողմից 17.03.2022թ. ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Արջիջի» ՍՊԸ-ի կողմից 17.03.2022թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**